600.0038.02.03.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2 մարտի 2016 թվականի №38Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի №148Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի փետրվարի 16-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 27-ի «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №148Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0543 լիցենզիայով (այսուհետ՝ №0543 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2016 թվականի ապրիլի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի փետրվարի 1-ը» բառերով:

2. №0543 լիցենզիայի պայմանների 30-րդ և 32-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:».

«32. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:»:

3. «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0543 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի հուլիսի 10-ի №1701/10/5 գրությամբ ներկայացված №14-0025 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված ինը միլիոն հարյուր տասը հազար դրամ գումարից չորս միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել ինը միլիոն հարյուր տասը հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի մարտի 18-ը գործողության ժամկետով:

4. «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
2 մարտի 2016թ.